ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 մայիսի 2011թ. թիվ 51 - Ա

<<ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 55-րդ, 66-րդ և 116-րդ հոդվածներով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 19-րդ և 68-րդ հոդվածներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին>> թիվ 1911-Ն որոշման,

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ ընկերության կողմից տեղաբաշխված թվով 6272 /վեց հազար երկու հարյուր յոթանասուներկու/ հատ 5.000/հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերը փոխարկվում են <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 6272 /վեց հազար երկու հարյուր յոթանասուներկու/ հատ 5.000/հինգ հազար/ հատ 5.000 դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի:
2. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ ընկերության կողմից տեղաբաշխված թվով 554 /հինգ հարյուր հիսունչորս/ հատ 5.000 /հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերը փոխարկվում են <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 675 /վեց հարյուր յոթանասունհինգ/ հատ 5.000 /հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի:
3. Հաստատել <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները համաձայն սույն որոշման 1-ին և 2-րդ

կետերի և տեղաբաշխման արդյունքում ձևավորված կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 34.735.000 /երեսուն չորս միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար/ դրամ, որը կազմում է 6947 /վեց հազար ինն հարյուր քառասունյոթ/ հատ 5.000 /հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսեր:

4. ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլման միջոցով վերակազմակերպման ճանապարհով ստեղծել <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> անվանումով փակ բաժնետիրական ընկերություն:
5. Սահմանել, որ <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակն է բժշկական օգնության և սպասարկման /հիվանդանոցային, արտահիվանդանոցային, շտապ բուժօգնություն և այլն/ կազմակերպումը:
6. Հաստատել <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը:
7. Սահմանել, որ <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում:
   <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով ընկերության տնօրենների խորհրդին վերապահված հարցերի լուծումը իրականացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, բացի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման հետ կապված հարցերից, որոնց լուծումը վերապահվում է ընկերության հիմնադրի կողմից լիզորված պետական կառավարման մարմնի ղեկավարին կամ նրա ներկայացուցչին:
8. <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Աշոտ Ստյոպայի Գյոզալյանին:
9. Սահմանել, որ <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման համար վերստուգող հանձնաժողով չի կազմավորվում և Հանձնաժողովի իրավասությունները դրվում են վերստուգողի վրա, որին նշանակում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետը:
10. <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի պարտականությունները դնել Արծրուն Հայկազի Մամյանի վրա:
11. Սահմանել, որ <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված բոլոր հարցերի /բացի ընկերության լուծարման, վերակազմակերպման, կանոնադրական կապիտալի նվազեցման հարցերից/ լուծումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի կողմից:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

19 մայիսի 2011թ.
ք. Իջևան